

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

30.01.2014թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ս.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ.Թորոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Գյուրջյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսա-պայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկին տրամադրել ՀՀ ԱՎԾ կողմից 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

2. «Ուղևորների և բեռների ավիափոխադրումներն ըստ քաղաքների» Ձև 11-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «ՀՀ ՎՊԽ 2013թ. սեպտեմբերի 12-ի թիվ 13-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև 41-կապ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «ՀՀ ՎՊԽ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 25-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել «Ուղևորների և բեռների ավիափոխադրումներն ըստ քաղաքների» Ձև 11-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը, «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև 41-կապ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «ՀՀ ՎՊԽ 2013թ. սեպտեմբերի 12-ի թիվ 13-Ն», և «ՀՀ ՎՊԽ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 25-Ն» որոշումները:

/Նորմատիվ/

3. «Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի խորհրդի կողմից 2010 թվականի հուլիսի 22 և 23-ին Ռեյկյավիկում (Իսլանդիա) հաստատված պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագիրը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում կիրառելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

1. Վիճակագրության բնագավառում պրոֆեսիոնալ արժեքները և փորձն ուղղորդելու նպատակով, իր գաղափարական համակարծրությունն արտահայտել Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի խորհրդի կողմից 2010 թվականի հուլիսի 22 և 23-ին Ռեյկյավիկում (Իսլանդիա) հաստատված Պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրին (այսուհետ՝ Հռչակագիր), և այն կիրառել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գործունեությունում.

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական գործունեությամբ զբաղվող այլ սուբյեկտներին առաջնորդվել Հռչակագրով:

/Անհատական/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 11-ից 15-ը «Տետրա Տեկ Ի Էս Ինկ.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի և Էներգետիկայի բնագավառում ճարտարագետների ասոցիացիայի (AEE) կողմից կազմակերպված «Չափման և ստուգման հավաստագրված մասնագետների ծրագրի» տարածաշրջանային ուսուցողական ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա. Գյուրջյան, Հ. Հակոբյան /

4.2. Հաղորդում՝ Կորեայի Տեջոն քաղաքում 2013 թվականի դեկտեմբերի 2-ից 6-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական վիճակագրական ինստիտուտի (SIAP) կողմից կազմակերպած «Կենսական (բնական շարժի) վիճակագրության արտադրությունը և օգտագործումը, կենսական տվյալներից դեպի վիճակագրական աղյուսակավորում» խորագրով 2-րդ տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կույումջյան/

4.3. Հաղորդում՝ Շվեդիայի Նորշոպինգ և Ստոկհոլմ քաղաքներում 2013 թվականի դեկտեմբերի 11-ից 13-ը Շվեդիայի միգրացիայի վիճակագրական տվյալների հավաքագրման և դրանց վերլուծությունների իրականացման փորձին, ինչպես նաև այդ նպատակով կիրառվող գործիքակազմին ծանոթանալու, Շվեդիայում միգրացիոն տեղաշարժերի գրանցման և միգրացիայի վիճակագրական տվյալների հավաքագրման ու վերլուծության հարցերով զբաղվող կառույցների գործառույթները, այդ կառույցների կարողություններն ու հմտությունները ուսումնասիրելու նպատակով այցելության վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կոյումջյան/

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

5.«Աշխատուժի հետազոտության հարցաթերթը և հարցաթերթի լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

Որոշեցին՝

Հաստատել «Աշխատուժի հետազոտության հարցաթերթը և հարցաթերթի լրացման մեթոդական ցուցումները» համաձայն հավելվածի:

/Անհատական/

24.02.2014թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի վիճակագրության ամբիոնի ասիստենտ Ռ. Գևորգյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի վիճակագրության ամբիոնի ասիստենտ Ռ. Գևորգյանին տրամադրել ՀՀ ԱՎԾ կողմից 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 3 (տարեկան), Ձև 3-ա (տարեկան), Ձև 8 (տարեկան), Ձև 33 (տարեկան), Ձև 37 (տարեկան) և Ձև 61⁹ վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի մի շարք արձանագրային որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 3 (տարեկան), Ձև 3-ա (տարեկան), Ձև 8 (տարեկան), Ձև 33 (տարեկան), Ձև 37 (տարեկան) և Ձև 61⁹ վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 21, թիվ 23, թիվ 28, թիվ 38, թիվ 42 արձանագրային որոշումները:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 210-Ն, 212-Ն, 213-Ն, 215-Ն և 216-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու» և «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» Ձև 70-SԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», «Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» Ձև 01-ԵՈՒ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», «Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» Ձև 01-ԵՈՒ (եռամսյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների և արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» Ձև 71-SԱ (տարեկան) և «Կենդանաբանական այգու գործունեության մասին» Ձև 1-կենդանաբանական այգի (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հաստատել ներկայացված պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները համաձայն հավելվածների և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 210-Ն, 212-Ն, 213-Ն, 215-Ն և 216-Ն որոշումները: